ԱՇԽԱՐՀՈՒՄՍ Ա՛Խ ՉԵՄ ՔԱՇԻ

(Արևելահայերեն փոխադրությունը)

Աշխարհումս ա՛խ չեմ քաշի, քանի որ ջա՛ն ես ինձ համար.
Անմահական ջրով լիքը ոսկե փնջան ես ինձ համար.
Նստեմ՝ վրաս շվաք անես՝ մետաքս վրան ես ինձ համար.
Մեղքս իմա՛ցիր, հետո սպանիր՝ սուլթան ու խան ես ինձ համար:

Մեջքդ՝ նոճի-չինարի պես, գույնդ ֆրանկի ատլաս է.
Լեզուդ՝ շաքար, շուրթդ՝ մեղր, ակռեկքդ մարգրիտ-ալմաս է.
Ոսկում արծնապակի արած, աչքերդ ակնակուռ թաս է.
Պատվական անգին ադամանդ, լալ-բադեշխան ես ինձ համար:

Ես էս ցավին ո՞նց դիմանամ, մի՞թե սիրտ ունեմ քարացած,
Արտա՛սուքս արյուն շինիր, խելքս՝ գլխումս շվարած,
Նոր պարտեզ ես՝ նոր այգու մեջ, բոլորքդ վարդով շուրջառած.
Մանգամ շուրջդ բլբուլի պես՝ սքանչելիք ես ինձ համար:

Քո սերը ինձ արբեցրեց, ես արթուն եմ, սիրտս է քնած.
Աշխարհս աշխարհով կշտացավ, իմ սիրտը քեզնից սով մնաց.
Յա՜ր, էլ ինչո՞վ քեզ գովերգեմ՝ աշխարհումս բա՛ն չմնաց.
Ծովից դուրս եկած հրեղեն նժույգ-ջեյրան ես ինձ համար:

Ի՞նչ կլինի հետս խոսես, եթե Սայաթ-Նովի յարն ես.
Շողքդ աշխարհը բռնել է՝ արեգակից էլ դու վառ ես.
Հոտավետ հիլ, մեխակ, դարչին, վարդ մանուշակ, սուսանբար ես.
Կարմրագույն՝ դաշտի ծաղիկ, հովտաց շուշան ես ինձ համար:

ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ

Սայաթ-Նովան, յուրացնելով հայ միջնադարյան սիրերգության հարուստ գեղարվեստական փորձն ու ավանդույթները, իր յուրահատուկ բանաստեղծական խոսքով կատարելության է հասցրել կնոջ գովերգը:

Արտաքին ու ներքին գեղեցկությամբ ու արժանիքներով օժտված սիրուհին

աշուղ-բանաստեղծին պարգևել է սիրո մեծ բերկրանք: Որոշ սիրերգերում առկա են փոխադարձ սիրո խոստովանություններ: Դրա լավագույն օրինակներից է «Աշ-խարհումս ամ չիմ քաշի» խաղը: Ահա վերջինիս խոստովանությունը.

Աշխարհումըս ամ չիմ քաշի, քանի վուր ջան իս ինձ ամա.
Անմահական ջըրով լիքըն օսկէ փընջան իս ինձ ամա.
Նըստիմ՝ վըրես շըվաք անիս՝ զարբաբ վըրան իս ինձ ամա.
Սուչս իմացի՛ր, է՛նենց սպանէ՝ սուլթան ու խան իս ինձ ամա:

Սայաթ-Նովան առավելապես մերժված և անպատասխան սիրո, ավելին՝ ող-բերգակա՛ն սիրո երգիչ է, սիրո տառապանքի երգիչ: Հետևաբար, սիրո վերք-հի-վանդության պատճառ դարձած Գոզալ-Նազանին հաճախ հանդես է գալիս նաև իբրև բեմուրվաթ (անխիղճ) և զալում (դաժան):

Սայաթնովյան երգերում սիրո տառապանքն արտահայտվում է դժբախտ սիրո առաջացրած տարբեր հոգեվիճակների, զգացողությունների ու գործողությունների թե՛ այլաբանական և թե՛ անմիջական արտացոլումներով: Նա ոչ միայն պատկե-րում է գնալով ահագնացող սիրո քաղցը, անմատչելի դարձած սիրուհու կարոտը, այլև սիրած էակի հետ առնչվող որոշ տարակուսանքներ, տագնապներ և դրանց ուղեկից խնդրանքներ, աղաչանքներ ու վշտալից հարցումներ ունի: